ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2024 թվականի N 1485 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 286 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշման 1-ին կետով հաստատված կարգի՝

1) 44-րդ կետի «ժբ» և «ժգ» ենթակետերում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) 44-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ժդ» ենթակետով.

«ժդ) «Մաքսային կարգավորման մասին» օրենքով նախատեսված՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող մաքսային հսկողության գոտիներում առևտրային գործունեության իրականացման թույլտվություն ստացած անձանց:».

3) 44.1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 44.2-րդ կետով.

«44.2. Սույն կարգի 44-րդ կետի «ժդ» ենթակետով սահմանված դեպքում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող մաքսային հսկողության գոտիներում առևտրային գործունեության իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով թույլտվություն ստացած անձինք համապատասխան վարձակալության պայմանագրերը պետական գույքի կառավարման ոլորտում լիազոր մարմնի կամ համայնքի հետ կնքում են թույլտվությունն ստանալուց հետո՝ նշված թույլտվությունը ներկայացնելով համապատասխան մարմնին։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

19.09.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ